

Տարեկան գինը 10 ըուրլի. կէս տարվանը 6 ըուր. Առանձին համարները 5 կօպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Укр. Бшугѣн. Тифлисъ, Редакція „Мшакъ“.

4^{me} Tiflis, Rédaction „Mschak“.

St. Louis No 253.

Քվեագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կօպէկ.
Տ է , է Ֆ օ ն № 253.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

U U U O t L

Մի ժամանակ—թէև շատ հին ժամանակ—
Արևելքը յոյս էր ուզադրուած Արևմտոսրբին, իսկ
այժմ նոյն Արևելքը, որ անուանվում է մահ-
մեղալահն Արևելք, ուղարկում է դէպի Արե-
մուտք խօսիրաւ և ժամատախտ: Եւ եթէ լսենք
Արևմուտքի կարծիքները, դուրս կը գայ, որ
Արևելքը այդպիսի սարափախիլ հիւրեր ուղարկ-
կում է այն պատճառով, որ նա մահմեդական
Արևելք է և ոչ թէ մի ուրիշ տեսակ Արևելք:
Այսպէս են ամենքն աւսում, այսպէս է զա-
տում այն անապին աշխարհը, որ վաղուց ա-
զատվիլ է կրօնի ինքնավարութիւնից և քա-
ղաքակրթական տարտ ու լայն զաղափարներ
է պաշտում: Այդ աշխարհը ներօտան է նե-
տրովհետև Արևելքն է միայն, որ ամեն քան
վիճելուց առաջ մահմեդական Արևելք է, մի-
աշխարհ, որ դեռ կրօնի ուժեղ հրամանի առկա
է գտնվում, ուստի Կարծում են, թէ մեղա-
ւորը այստեղ կրօնն է: Բայց որքան ճիշդ է
այդ «*Расни*» լրագիրը փորձում է հնգրքի
համատարած այդ Կարծիքը: Եւ հերքում է,
հիմնվելով մահմեդական կրօնի այն պատուի-
րանների վրա, որոնք հրամայում են իշա-
քանչիւր հաստատացեալին մաքրութիւն պահ-
պանի, մահաւանդ մարմնի մաքրութիւն: Եւ
իրաւ, բրիտոսոնեան իր կրօնից չէ սովորում
ապրուստի արտաքին հանդամանքների մասին
որ և է իրաւո, մինչդեռ իսլամը իրան հետե-
ւողների համար մահաւանդ է մաքրաօրու-
թիւնն սովորեցնող ձէպիւր: Յայտնի է, որ մահ-
մեդականութեան մէջ լրացումները կրօնական
արարողութիւններ են. և ճիշդ է նկատում
Բագուի լրագիրը, որ ջուրը—կրօնական աստ-
րիւրում է մահմեդականների մէջ: Եւ եթէ վա-
րակիչ հիւանդութիւնների արմատը անմաք-
րութեան մէջ է, ինչպէս է որ մաքրաօրու-
թիւնն սովորեցնող մի կրօնի հետևողներին
պատկանող Արևելքը խօսիրալի և ժամատախտի
հայրենիք է մշտապէս: «*Расни*»-ն պատա-
խանում է այդ հարցին, ասելով թէ պատճառն
այն է, որ մահմեդականները իսկական մահ-
մեդականներ չեն, այսինքն անտարբեր են
դէպի իրանց կրօն:

Աւսդ, բաշխականում է լրագիրը, մեր օրերում նրանք, որոնք իրանց անուանում են մանկեղանային, բոլորովին այլ կերպ են հասկանում ոչ միայն կրօնի հրամանը ժաշկութիւն պահպանելու մասին, այլ և առհասարակ ամբողջ կրօնը։ Այստեղ, ինչպէս և ամեն մի բանի մէջ, նրանք ձևական վերաբերմունք են ցոյց տալիս, առանց խորապէս ըմբռնելու այն հիմնական սկզբունքը, որով զիջակարկիւ է խառնի հիմնադիրը։ Եւ կեդ-տուտ են նրանք հէշջ այն պատճառով, որ մանկեղանայինը չեն։

Մի խօսքով Բագուի լրագիրը կարծում է, թէ չարիքի պատճառը կրօնական անապրի-րութիւնն է. այդ անապրիւրութիւնը աւալա-նում է ագիտութիւնից։ Փրկութիւնը միայն դպրոցն է, աւելացնում է լրագիրը։

Կըթոսթիւնը ամեն մի բարձրագոյն թիւան,
ամեն մի երջանկութեան հիմնաքաջն է,—որ
որ չէ վիճում և չի վիճի այս համաշխարհա-
յին լոյս—ճշմարտութեան զէմ: Բայց մենք
կարծում ենք, որ լրագրիւր շատ սահմանափակ
մաքով է հասկանում խօրհայի և ժանտխա-
յի տարածման պատճառները: Մենք մի կողմ
ենք թողնում այն հարցը, թէ միլիօնաւոր
մասնն դակիանները որքան ճշմարիտ մասննգա-
կաններ են, որքան լաւ են ըմբռնում իրանց
զօնի էութիւնը: Այստեղ մենք վճռական
ուսմբ չենք կարող պահել, քանի որ մասննգա-
կա խաբարի բուն կրօնական դրօտութեան
միջ այնքան լաւ յայտնի չէ, և տահասարակ
ատ դժուար է կշռագատութիւններ անել այդ
զօնի հարցերում: Բայց մենք պիտի երկոյթ-
ենքը դատենք ընդհանուր մարդկային տեսա-
էտից: Անկասկած, մաքրութիւնը առողջա-
պահական առաջին պայմանն է: Բայց մի սո-
թութիւն պահպանելը կախում ունի այն սո-
թալական և տնտեսական պայմաններէր, ոչ

րոնց մէջ ապրում է մի ժողովուրդ։ Արեւելքը փարթեամ շոալլութիւնների, քայց մի ե նոյն ժամանակ ամենատալալի աղքատութեան հայրենիք է։ Աղքատ զսակարգիբը այնտեղ ահազկն մեծամասնութիւն են կազմում և իրանց ղօքադղ, աղոյս, հարստաբարված կեցութեանը ամենանայատաւոր հող են ներկայացնում վարակիչ հիւանդութիւնների համար։ Թե՛ն անէ մարբութիւն քարոզող կըծնը, լե՛ն անէ գիտութիւնը, նոյն իսկ կատարեալ գիտակցութիւնը, երբ ազգաբնակչութիւնը միջոց չունի կատարելու ար, ինչ հրամայում են իւրանք։ Հէ՛ն նոյն «Racine»-ի այն համարում, որի մէջ տղված է այդ յօդուածը, մի ուրիշ աշխատակից Նկարագրում է այն միջավայրը, որ իօրեան ամենից շատ գոհեր է տանում։ Ովէ՛ք են հիւանդացողները, ովէ՛ք են կոտորվողները։—Պարզապատասխան մշակները, ուրոնք «համբալ» անունն են կրում։ Ով տեսել է այդ ղօքադղ, մերկ զսակարգը, նա ասանք էրկար մոռածելու էլ կասէ, թէ ուրիշ կերպ չէ էլ կարող լինի։ Ահա ինչպէս է նկարում «Racine»-ի աշխատակիցը այդ քանտր, անսահման համբերատար, չարքաշ մարդկանց կացութիւնը.

Ստանալով չնչին օրավարձ, նրանք կամայա կերպով պիտի խնայեին. նեղ թոյնների մէջ, որոնք էին և լոյսի ամենաառանձնապիսի ըստնակութիւնն կայ: Գնում են համբարները փառած փայտանների վրա, միտեանց կայած: Հաստ, կոպտի կտաւից կարած սպիտակիւղիւն և դրանց հազուադէպ մնում են մարմնի վրա, մինչև որ միայապաղ ջնջողոտներն են դառնում: Բարձրիս գնում են անհատները, իսկ առաջին սիւժամասնութիւնը չէ կարող լեւան թշուր տալ աշգրիտի շփոթութիւն, որովհետև 5 կամ 10 կօպէկներ չունի: Ամեն մէկը պիտի մի կերպ գտնու պահէ և մի բան էլ ուղարկէ իր ընտանիքին, թէ չէ ընտանիքը սովամահ էր լինի: Առանց քանաութեան բոլոր համարները կերակրվում են չոր հացով, կիսով չափ փառած ընտելչմաներով և բոլորովին փառած մրգերով: Միայն ունեւորները, աշխուճ ուրիշներից բաւ աշխատողները, երբեմն ուռում են տաք կերակուր, չորիւս, փլուս, փառոված: Համարները խմում են ջրհորի կառակածիւր ջուր: Եւ ի ներկէ հրաւիրանում են միւս բանւորներից յաճախ և շուտ:

Համաձայնից էր, որ կրճատվան լուսացում-
ները այսպիսի պայմանների մէջ չեն օգնի,
մանաւանդ որ այդ լուսացումներն էլ վաղված
են նրեթական հարողութեան հետ: Հարցը ա-
ռելի ծանրակշիւ էր, առիթ բրդը, քան որքան
կարծում է «Касим»-ն: Մօցիլայական անար-
դարութիւնները, աշխատանքի վատ վարձատ-
րութիւնը իջրէ հիւանքի երեոյթ, առելի ու-
նիւղ են, առելի անդրմազգիւր, քան հոգու
իրկութեան հարկերը: Եւ առհասարակ ժամա-
տակ չէ՝ հոգու հարկերը թողել անհատի լըզը
ին ու ազատ կամբին եւ թշուառութիւնների
կատաճառները օրոնել այն պայմանների մէջ,
ընդ եմեթարկված է մարդկութեան ամեն մի
եւծ կամ փոքր հատուած՝ անկախ այն հա-
մամարից, թէ ինչ կըրն է նա դաւանում եւ
ըշխարհի որ կողմում է ապրում...

4 5 6 7 8 9

Բաժնեկալիցիներին ժողովների համար Աղդաշ
գիւղում (Կանձակի նահանգ, Արեւի գաւառ)
Է. Նրեւան ֆադաբում 1904 թ.

1) Ժողովները գումարովում են՝ երկրագործ-
 ծուծեան միևիտարի կարգադրութեան համա-
 լայն, իր կրվկասեան լրագորի ձեռքով Ադ-
 լաշ գիւղում ալ տարվա հոկտեմբերի 5-ից
 ինչեւ 7-ը և Երեւանում՝ հոկտեմբերի 14-ից
 16-ը:

2) Ժողովներին կարող են ժամանակցել Ան- բաղկով կատարվող բարձրագույն թեմայի և բարձրագույն առևտրային պարագայի անձինքը, շահագրգռված վարչություններին և տեղական իշ- անություններին նշանակած ներկայացուցիչ- ները:

3) Ժողովները նպատակն է պարզել այն մի-տոյ
ոցները, որոնք անհրաժեշտ են բաժանա-Ան
լուծեան կանօնաւոր և աշուղ զարգացման ու աշո

ընդարձակման համար՝ Անդրլեռվկասում: Ժողովների քննութեան ենթակայ ամենազրկաւոր հարցերը մասնացոյց են արված ժողովների զբաղմունքների ծրագրում:

4) Ժողովների նախագահները լինելու են հրկրագործութեան սինիստրի նշանակած անձերը:

5) Ժողովները կազմակու են նրանց գործավա-
րութեան բոլոր կարգադրութիւնները, երկրա-
գործութեան մինչևտրի կովկասեան լիազօրի
ընդհանուր վերահսկողութեան տակ, յանձն-
վում են արեւելեան Անդրկովկասի բաժնակի
ցահարսութի կառավարիչ գիւղատնտես Տաբա-
տինովիին և ուրիշ ծառայողներին, որոնց կը
նշանակէ լիաժող լիազօր:

6) Ժողովներին մասնակցելու համար յայտարարություններ են տրվում, մինչև ժողովներին բացման սկզբը, կովկասյան լիազորին, իսկ զբանից յետոյ՝ ժողովների նախագահներին:

7) Ժողովները զբաղվում են ներքին առարկաները
են կազմում գեղարվեստների և բերանացի հա-
ղորդած տեղեկությունները ընթերցումը, քննա-
դատությունը և որոշումներ կայացնելը, գեղու-
ցույթները և բերանացի հաղորդվածները լինե-
լու են Ժողովի ծրագրի մէջ մտած հարցերի
առիթմով:

8) Ժողովները ծրագրել մեջ մտած հարցերը մասին զեկուցումները հնար եղածին Հափ շուտ պէտք է զրկեն, որ կովկասեան լիազօրը նախապէս նայէ:

9) Ժողովները որոշումները կողակասեան լիազօրէի միջոցով պէտք է ներկայացվին երկրազօրծութեան միւնիստրութեան ի հաստատութեան:

Անդրկովկասեան բաժնակաբոյժների 1904 թի
ժողովների ֆնոութեան հարցերի ծրագիրը:

1. Ինչպիսի պատմաններում կարելի է յուշաւոր բամբակաբուծութիւնը նշանաւոր կերպով կընդարձակել Սնդրիով կառոււ, յատկապէս որ մասերում և ի՞նչ հափերով:

II. Հնարաւոր է արեւօք այդպիսի ընդար-
ձակումս ոռոգման հերկայ հափերի ժամանակ
եթէ հնարաւոր է, լինչքան: Ի միջի այլոց՝
հնարաւոր չէ՞ արեւօք հողային ուրիշ բարե-
աւուրմանով, բայց ոռոգումը, ընդարձակել
ուռոգարարութեւնը համար յարմար հողի
տարածութիւնը (խոնաւ, ճահճային վայրերը
որոշանալով և այլն):

III. Ո՞ր մասերում հնարաւոր է բամբակա-
տուծութիւնը նշանաւոր չափերով զարգացնել՝
ուսանց ոռոգման.

VI. Ի՞նչ միջոցներ պէտք է ձեռք առնել
ամբակաբուժության ընդարձակման և նյութ
իզել տեխնիկական և տնտեսական բարելաւ-
ման համար, և ի՞նչպէս պէտք է կազմակերպել
դր փոփոցները:

Մ. Ի՞նչ միջոցներով կարելի է բաւարարու-
իւն տալ բամբակաբոյծներին էփան և յար-
սը վարկ ունենալու պահանջը:

VI. Ինչպիսի ոչ ցանկալի երևոյթններ են
խառնում բամբակի առևտուրի մէջ իր ար-
ւանաբերութեան տեղերում և ի՞նչ միջոցնե-
րով պէտք էր արդեօք կանօնաւորել այդ ա-
տուրը:

VII. Իսկ միջոցներով հնարաւոր է օգնել զբնակչության բամբակաբուծական դաշտերի մար անհրաժեշտ բանւորների թւի աճեցնել:

VIII. Բամբակաբուծութիւնը իրարխուսելու
 ղոյցները կազմակերպութեան գործին և նրա
 ակնադայան համար պահանջված ծախքերին
 և չափով կարող են մասնակցել իրանք՝
 մրակաբուծանքը և բամբակի գործով զբաղ-
 ւող առևտրական տները:

ՆԱՄԱԿ ԱԼԷԻՍԱՆ ԴՐՈՊՈԼԻՑ

Սկսվեցին 9-ին
կմխա 2-ին կարճատև հիւանդութիւնից յե-
ր, մեռաւ Օղէսայի համալսարանի ուսանող
ուշաւան Տէր-Սարգսեան՝ իր կեանքի 22-դ
էնը նոր ոտք դրած...

Մի նոր, ծանր կորուստ, որ ամենախորին վշտով համակեց ամբողջ Ալեքսանդրապոլսը— գաւառական մի խեղճ քաղաք, որ դեռ յոյսերի ու սպասումների ակնկալութեամբ է ապրում։ Մէկիկ-մէկիկ թափվեցին ծաղիկները այն պատկեր, որով իր գլուխը պսակել էր երազում խաւարի մէջ հողմածառ տառապող հայրենի քաղաքը... Մեռաւ Հայկ Տիգրանեանը, նրա ետեւից այնքան մատաղ կեանքեր... Բայց հա՛ն մեռնում է և Անուշաւան Տէր-Սարգսեանը հաղիկ տանն և հինգ օր պառկելով անկողնում... Մի էակ էր նա, որ իսկ կոյն սիրելի էր դառնում ամենքին և անծանօթին և՛ այլազգին։ Ամենքը հիանում էին նրանով ու սպասում հաւատարմով, որ Անուշաւանը մի օր կը պսակէ իրանց յոյսերը։ Այդ յոյսերը զուր չէին։ Անուշաւանը բնութիւնից օժտված էր այնպիսի արտակարգ ընդունակութիւններով (ներսխսեան դպրոցը նա աւարտեց քսանչորս հաս 5-երով), որ իրաւունք էր տալիս ամենքին, ով տեսնում էր իրան՝ տածել մեծ-մեծ յոյսեր... Իսկ իր բնաւորութեան հրեշտակային գծերը,—բացարձակ անմեղութիւնն ու մաքրութիւնը, անօրինակ համաստեղութիւնը, որ համարում էր արդէն նորաճարի ամօթխածութեան, անծայր ազնուութիւնն ու մտածկուն—չխօսկանութիւնը՝ լրացնում էին ամեն ինչ ու դարձնում նրան կատարելաւ։ Եւ այդ բոլոր յոյսերը կորան նրա անսպասելի մահով, որ այնպէս ողբերգական էր, այնպէս վաղաժամ։

Օգոստոսի 23-ին մատաղահաս ուսանողը կապում է իր շորերը և ուղևոր է ուղի ընկնելով Ռեյս։ Սակայն լսելով, որ նաւը Բաթումից դուրս է գալու ամիս 28-ին, որոշում է յետաձգել իր գնալը մի քանի օրով։ Առանց վերաբերելի գալիս է կայարան ու ճանապարհ է գցում իր ընկեր ուսանողներին։ Այդպէս այդուց տուն է դառնում և ընկնում անկողին։

Միւլի էր նա 1882 թիւին։ Տեղիս ծխական դպրոցն աւարտելուց յետոյ, բարեկամների խորհրդով, Անուշաւանին տանում են Թիֆլիս և տալիս ներսխսեան դպրոցը։ 1901 թիւին չը տեսնված ամբողջութեամբ նա վերջացնում է դպրոցի դասընթացը և հոգաբարձական խորհրդի որոշումով պատրաստվում է համալսարան մտնելու՝ որպէս դպրոցի ստիպելիքատ։ 1903 թիւի մայիսին աշդուութեամբ ընտրութիւն է տալիս Թիֆլիսի III գիմնազիոնում և նոյն թիւի սեպտեմբերին մտնում Օդէսայի Կայսերական համալսարանի ֆիզիկո-մատեմատիկական ֆակուլտետը։ Փոխադրվելով II կուրսը, ամառն նա վերադարձաւ Ալեքսանդրապոլ։ Ներսխսեան դպրոցի վարչութիւնը յունվարից յետոյ այլ եւս անկարող էր գտնվել նպաստ ուղղակի իր որդեգրին... Եւ Անուշաւանը ուսանողական կասալի չնչին նպաստով ու նեղութիւններով էր անցնել իր կեանքը մինչև յունիս։ Գալով հայրենիք՝ որպէս մարմնացած աշխատութիւն՝ առաւօտից մինչև երեկոյ պարապում էր իր վեց-եօթ աշակերտների հետ, մէկից միւսին վաղելով (դեռ ժամանակ էր գտնում տանն էլ պարապելու իր եղբոր ու քոյրերի հետ), յուսարով, որ դասերից ձեռք բերածով կարող կը լինի այս տարի էլ մի կերպ անցկացնել։ Երեկ այնքան ծանր աշխատութիւնն էր, որ նա անկարող եղաւ դիմադրել անողորմ հիւանդութեան՝ թէէն յոգեհամոզեան նշոյլ անգամ չէր նկատվում։

Ս. Նշան փորձելի եկեղեցին լցվել էր ամբողջովին ծանր վշտի տակ ընկձած մեծաքանակ արթնալուսներով։ Դա՛գալի վրա գրված էին հինգ պատկեր՝ ընկերների երեք խմբի (մէկը՝ «Քիւրան Աշուղին» որպէս ընկերներից) մականգրութեամբ և ազգականների կողմից։ Դա՛մբանականներ խօսեցին նախ՝ Ներսէս քահանայ Նիկողոսեան, որը խորապէս զգացված էր անժամանակ գերեզման իջնող իր սիրելի աշակերտի մահով և որ խորապէս յուզեց յուրաքանչեւորներին։ Առաջ եկաւ հոգեկիցը, հիւանդ ուսանող Սալ. Դուրաքեան և սկսեց խեղդող, կաշկանդող արտասուքի մէջ արտասանել մի դաժնանական ոտանաւոր, որ ցնցեց ունկնդիրներին... Այդ դպրոցական ընկեր Ս. Մահաբեի Բաճակեան կարգաց մի դաժնանական ձառ, որ նոյնպէս յուզեց յուրաքանչեւորներին, որոնք անխորհրդ քառասուն ողորմ էին շիւտ ու ուսանողին։ Միտ էր մորմոքեցնում դա՛գալի վերե կանգնած հանգուցեալի քահանայ հայրը, որ իր մեծ վշտից ծեղացել էր խորապէս... Տխուր գնացքն ուղևորվեց դէպի գերեզմանատուն։ Պատկերներ տանում էին անտարական դպրոցի աշակերտները։ Դա՛գալի ուսերի վրա էին կրում Պայծառ, արև օր էր՝ մեռնող պատանու արևի

նման տաք ու վառվունչ օր։ Տխուր տաղերի, անսփոփանք, սրտակտոր լացի ու արտասուքի ուղեկցութեամբ, տողերիս գրողի դաժնանականից յետոյ, դա՛գալի, իր թանգ աւարով, իջաւ գերեզման և հողը յաւէտ ծածկեց աչքից սիրուն պատկերը այն իրէշտական էակի, որ տիրում էր բոլորիս սրտին...

Ի պատասխան իմ տուած հեռագրի, այսօր ես ստացայ Ներսիսեան դպրոցի տեսուչ պ. Ս. Մալխասեանից մի հեռագիր, որի մէջ ուսուցչական կազմի խորին ցան է յայտնուած դպրոցի սիրեցեալ ամսի՝ իրանց Անուշաւանի անժամանակ մահվան առիթով...

Գ. Նալբանդեան

ՆԱՄԱԿ ՀԻՆ-ՂԻՐՄԻՅ

Օգոստոսի 25-ին

Ղրիմի հայերի մէջ ընդունել երեւոյթներէից մէկն էլ ուխտ գնալն է։ Մեր Ղրիմում, ինչպէս յայտնի է, երկու վանք կայ, որոնցից մէկը՝ ս. Սալ վանքը, ունի մշտաբնակ վանահայր, իսկ միւսը՝ ս. Փրկիչ, գուրկ է վանահօրից և կառավարում է զարատաւարացիներէ ընտրած երէցփոխը։

Ղրիմի ս. Սալ վանքի մասին առհասարակ շատ է գրվել լրագրողների մէջ, իսկ ինչ վերաբերում է ս. Փրկիչ վանքին, համարեա շատերին անծանօթ է։ Ուխտի առիթով բնորդ ունեցալ գնալ ս. Փրկիչ, որը շարատաւարացիէ 12 վանքաւ հեռավորութեան վրա է գտնվում։ Պէտք է նկատել, որ ուխտի տօնը կատարվում է շատ շքեղ։ Երեկոյեան ժամերգութիւնից յետոյ լուսավառութիւն կար. աւագին բազմութիւն էր հաւաքվել։ Երեւոյեան ժամերգութիւնը, ինչպէս շատ տեղերում, քէֆերով էին զբաղված. դա նրանց միակ գոհարածութիւնն է։

Միւս օրը պատարագը կատարվեց բաւական շքեղ, որովհետև ներկայ էր ս. Սալ վանքի վանահայր Ն. Վ. Նաւապետեանը, որը օրվայ առիթով քարոզ խօսեց, բայց այդ, երբում էին կողմնակի երիտասարդներ, որոնք բաւական լաւ տպաւորութիւն թողին ժողովրդի վրա, որը ընդհանրապէս զուրկ է եկեղեցական կանոնաւոր երգեցողութիւնից։

Ուրախութեամբ արձանագրում ենք, որ Ղրիմի թերակղզու քաղաքներից մէկը, այն է Ղարատաւարաքը, վերջապէս ունեցաւ մի երիտասարդ և Ներսիսեան դպրոց աւարտած քահանայ, որը, յոյս ունենալ, կարող կը լինի իրան յանձնված համայնքի հոգեւոր պետերը հոգալ։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՍ

Ուղևորանյութ-Չուլֆա երկաթուղային գծի աշխատանքները ամառվայ ընթացքում դա՛գալի էին, իսկ այժմ նորից վերսկսվել են և 107 վերստ տարածութեան վրա հողային աշխատանքներն արդէն պատրաստ են և շուտով կը սկսվի երկաթէ գծերի անցկացնելը։

Մօսկվայից մեզ հաղորդում են, որ պ. Գ. Սալաթեանը հրաժարական է տուել Լազարեան ձեռնարանի տեսչական պաշտօնից և ուղևոր է մնալ միայն պրօֆէսօր ձեռնարանի շէնքերում։

Ֆինանսների մինիստրութեան մէջ հերթական հարցերից մէկն էլ կազմում է գիւղացիների համար փոխառու ընկերութիւնների հիմնելու խնդիրը։ Մտադրութիւն կայ հիմնել այնպիսի մանր փոխառու ընկերութիւններ որոնց նպատակը լինի գիւղացիներին մանր փոխառութիւնների անկ յատկապէս սերմացու, երկրագործական մեքենաներ և գործիքներ և, ընդհանրապէս, գիւղացու համար անյետաձգելի իրերը գնելու և կարելիները հոգալու համար։

Մենք ստացանք «La Revue des Ideés» ֆրանսիական ուսումնական ամսագրի սեպտեմբերի, № 9 համարը, որի բովանդակութիւնն է «Մալխասեանի (1859 թ. պատերազմը Բաթումում) մահնովը», մի ռազմագիտական ուսումնասիրութիւն գեներալ Բօննայի «Մենդելի օրէնքները և ժառանգականութիւնը»—Գուստավ Լուսաթելի. «Երջն է իրէշտական նախն հաւատալը»—Ժիւլ Գօտիէի. «Սառցարանները և սառուցային շրջանը»—Մ. Լաւրյի. «Անտաղանութեան գաղափարը լեզուի մէջ»։ «Չորրորդ Աւետարանը», Դրոնիկօն—Ինօթէ և Ն. ձառագայթները. Լիւտէր և գիտութիւնը. Պատարի կարագիւրը XVII դարում։ Ամսագրի գինն է տարեկան 18 ֆրանկ

և հասցէն «Paris, 6, Rue du Vingt-neuf Juillet.

Պետերբուրգի ժողովրդական համալսարան կոչված հիմնարկութիւնը դադարացել էր իր պարապմունքները։ Մայրաքաղաքների լրագրողները հաղորդում են, որ այժմ արդէն յոյս կայ, որ նրա վերաբացման հարցը մօտենում է լուծման. լիակատար յոյս կայ, որ այդ 1905 թիւի փետրվարի կէսից նա բացվի։

Վարչաւայի և Սանսովիցի մօտ եղած մեքանիքական և չուգունէ ձուլվածների գործարաններին գինւորական վարչութիւնը պատուէր է տուել շուտով շինելու պատերազմական ձիարաքշի բոլոր մասերը։ Այդ մասերն առանձին-առանձին կուղարկվեն պատերազմի բեռը, ուր ձիարաքշը կը սարքվի և կը սկսի փոխադրութիւններ անել։

Արևմտեան Եւրոպայում իր գիտական հետազոտութիւններով հռչակված ռուս բնագետ Ի. Մեյնիլովը, ինչպէս հաղորդում է «HOB» լրագիրը, այս տարվայ վերջին պէտք է գալ Ռուսաստան։ Օգտվելով այդ առիթից, տաղանդաւոր գիտնականը կարգաւոր է Պետերբուրգում և Մոսկվայում մի քանի հրապարակական դասախօսութիւններ։

Բագուից մեզ հաղորդում են. «Նօյեմբր»-ում մեռածները սեպտեմբերի 11-ին 7 կին և երեք տղամարդ էին, բոլորը թուրքեր։ 12-ին 8 կին, 1 տղամարդ—թուրքեր, մէկը հայ—տղամարդ։ 13-ին—14 կին, 2 տղամարդ—թուրքեր։ Բացի, ի հարկէ, թագաւորածները։

ՂԱՂԱՍՏԱՍ գիւղից (Կարսի գաւառ) մեզ գրում են. «Մի սարափելի գաղանութիւն տեղի ունեցաւ սեպտեմբերի 6-ին Գորխանայ հայ գիւղում։ Գորխանայ գիւղի հայ երեք երեխան, 12—14 տարեկան, իրանց տնական անասուններին, ինչպէս միշտ, տանում են գիւղի սահմանում արածացնելու։ Երեկոյեան անասունները վերադառնում են գիւղ առանց հօտաղների։ Տղաների ծնողները անմիջապէս գտնել են որոնելու, բայց չեն կարողանում գտնել. երեք օր գիշեր-ցիւրիկ շարունակ ման գալուց յետոյ, վերջապէս գտնում են երեք երեխաներին գլուխները կտրած»։

ՎԱՂԱՐՇԱՊԱՍՏԻՑ մեզ գրում են. «Շուտով լինելու է Վաղարշապատի համայնքի գօրծալական ընտրութիւն։ Մինչև այժմ ընտրված է գօրծալներից գրեթէ և ոչ մէկը չէ արաբացրել ժողովրդի իրան վրա դրած յոյսերը, պատճառ, որ նրանք լինելով մեծ մասամբ ազգէտ, անգրագէտ և եսամոլ մարդիկ, աւելի շատ աշխատել են իրանց գրպանի, քան ժողովրդի համար։ Նրանք շատ գործեր ունեն կատարելու, բայց այդ բոլորը թողած սկսել են իրանց անձնական թշնամիներին տապալել, կանգ չառնելով ոչ մի միջոցի առջև։ Այժմ երբ կատարվելու է նոր ընտրութիւն, խորհուրդ ենք տալիս մեր հասարակութեանը լինել վերին աստիճանի աշխուրջ, ընտրել մի խելացի, ինտելիգենտ և ժողովրդի շահերը ամեն բանից վեր դասող անձնաւորութիւն»։

ԵԼԵՆՕՎԿԱ գիւղից (Երևանի գաւառ) մեզ գրում են. «Ամսիս 7-ին Ելենօվկա գիւղում պատահեց հետեւեալ ցուալի մի դէպք։ Մալական երկու տարեկան երեխան խեղդվում է խմորում, տաղալ մէջ։ Ի՛նչպէս պատահում է այսպէս. մայրը երկու փոքր երեխաներին թողնում է տանը, իսկ ինքը դուրս է գնում կալը մոտիկ տալու, առաջնց խմորը շաղախած է լինում. քառորդ ժամ անցած վերադառնում է տուն և գտնում է մի երեխային ընկած աշտի մէջ և դուրս է հանում արդէն անշունչացած»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՈՒՐԶԸ

Եապօնական հետեւալիք եւ հեծելազօրք։ Պատերազմի բեռից Տօկիօ վերադարձած օտարազգի թղթակիցները, ինչպէս հեռագրում են «Standard» լրագրին, միաբերան ջերմ կերպով գովում են եսպոնական հետեւալ զօրքը, բայց հեծելազօրքի մասին խօսում են կատարելաւ անտարբերութեամբ։ Եապօնական լրագիրները շարունակում են ընդադառնել այն համաձայնութիւնը, որ իբր կայացել է Ռուսաստանի և գովում են համաձայնութիւնը ոչ մի միջոց Գերմանիայի մէջ։ Այդ հարցում լրագիրները կատարելաւ համաձայնութիւն են ցոյց տալիս

ամենքը յոյս են տածում, որ լուրը շուտով անհիմն կը յայտնվի և մի և նոյն ժամանակ խորհուրդ են տալիս Գերմանիային չը կրկնել այն սխալները, որ նա արեց չինահայոցական պատերազմից յետոյ, որովհետև դա ցաւալի յարաբերութիւններ կը ստեղծէ Գերմանիայի և Եապօնիայի մէջ։ (P. A.)

Եապօնացիներ արդէն սկսել են արեւել Մակաուի վրա։ Բերլինից հեռագրում են, թէ սեպտեմբերի 10-ին պատերազմի բեռից ստացված տեղեկութիւնները ետպօնական զինուորական կառուցող մօտ գտնվող թղթակիցներից, հարկադրում են մտածել, որ եապօնական ամբողջ բանակի արշաւումը Մակաուի ուղղութեամբ արդէն սկսվել է։ Տօկիօից հեռագրները հաղորդում են այն հրամանի բովանդակութիւնը, որով մարշալ Օյիաման դիմել է իր զօրքերին՝ Հրամանագիրը կոչ է անում բոլոր զօրքերին Մակաուի անալիկալ ճակատամարտի մէջ կռւել լի բաշխութեամբ, համարձակութեամբ և ետանդով—յատկութիւններ, որոնք յատուկ են եապօնական զինուորին։ Գլխաւոր հրամանատարը հրաւիրում է զինուորներին կենսոյանցնել իրանց բոլոր ոյժերը այն նպատակով, որ առաջիկայ ճակատամարտը ամենալուծական վախճան ունենայ։ Ամբողջ Եապօնիայի աչքերը—եզրակացնում է Օյիաման—ուղղված են զօրքի վրա։ (B. B&L.)

Ռուսական հսկայաւորի ստացած հրամանը։ «Daily Telegraph» լրագրի թղթակիցը հաղորդում է, որ Վաղարշապատի և Պորտ-Արտուրի էսկադրաները հրաման են ստացել՝ եապօնական էսկադրայի հետ իրանց ունենալիք առաջիկայ ընդհարման ժամանակ ամեն կերպ աշխատել ոչնչացնել թշնամու պատերազմական նաւերը։ Եապօնացիները հնարաւորութիւն չունեն լրացնել իրանց նաւատորմի պակասը, իսկ այդ դէպքում երկու կամ երեք խոշոր պատերազմական նաւերի կորուստը նշանաւոր կերպով կը փոխէ հաւասարաշուշութիւնը ծով վրա։ (P. B&L.)

Մի կարծիք Եապօնացիների արեւադարձ արժանաւ մասին։ «Berl. Tageb.» լրագրում տպված է պատերազմական գործերի մէջ հեղինակաւոր մի անձի յօդուածը, որ գալիս է այն եզրակացութեան, թէ եապօնացիների արշաւողական շարժումը հասել է այժմ իր ծայրագոյն աստիճանին, որից արդէն պէտք է սկսվի յետադարձը։ Հեղինակի կարծիքով, մի անգամ որ եապօնացիները չը կարողացան ձեռք բերել վճռական արդիւնքներ կառնանի ճակատամարտում, նրանք եւս առաւել սակաւ կարող են աշդուութիւն անենալ Մակաուի և Տէլինի մօտ, որովհետև, ինչպէս ցոյց տուեց, Լեւոսեանի կռիւը, նրանք չունեն բաւականաչափ ոյժեր թիկունքային շարժումը աշդուութեամբ կատարելու։ Կուրօկիլի բանակի անցումը օգոստոսի 18-ի գիշերը Տայձիլէի աջ ափի վրա, այդ բանակի ճակատի յաջորդական փոփոխութիւնը Միկվանտունից դէպի աւրեւմուտը ուղղութեամբ, դէպի Եանայի հանրերը, գլխաւոր նպատակ ունեն շուտով գրաւել ռուսական բանակի նահանջման միակ ճանապարհը դէպի հիւսիս և կտրել այդ ճանապարհը գեներալ Կուրօպատկինի առաջ։ Այն բաժնից, որոնք Կուրօկին գործածեց այդ նպատակի համար, Եուրա և Մօտիէին հերոսներն էին Պէտք է հաւատացնել լինել, որ նրանք սեփական զբոժամը, ամեն բան արեցին, որպէս զի շուտով նպատակին հասնեն և Լեւոսեանի կրիսայղութիւնը լիակատար յաղթութիւն դարձնեն։ Նրանց առաջնորդ Կուրօկին դա համար ամենալաւարդ մարդն էր, հաղուգելու ետանդով և անխախտելի հաստատակամութեամբ։ Իր պլանի աշդ կատարման համար նա գործադրեց մինչև վերջին մարդը և ձին, և եթէ, այնու ամենայնիւ, նա չունեցաւ վճռական աշդուութիւն, և նրա բանակը սեպտ. 1-ից մինչև 4-ը միայն մեծ զբոժարութեամբ առաջ շարժվեց, դա կարելի է բացատրել միայն նրանով, որ նա իր տրամադրութեան տակ ընչ զօրք ունէր։ (P. B&L.)

ԼՈՒՐԵՐ ՊԱՐՄԱՍՍԱՆԻՑ

Ատրպատականի զանազան կողմերից մեզ հասած նամակներից քաղում ենք հետեւեալ տեղեկութիւնները խօսիւալի մասին։ Թաւրի զից, սեպտ. 4-ին գրում են. «Հաստատու էր կան, որ այժմ Մարաղայում խօշիւրայից մեռնում են օրական 70—80 հոգի։ Ամեն օր Մարաղայից Թաւրիզ է գալիս մօտ 300 մարդ. կառավարութիւնը ոչ մի միջոց ձեռք չէ առնում կարանտինի ենթարկելու նըրանց կամ մուտքը արգելելու, ուստի ամենքս

անկախ կամ սպասում ենք, որ անկող հիւրեր
մեզ ձեռք ևս լայն ծառայ կընդունեն: Պարսկե-
ները սկսել են քաղաքից հեռանալ: հայերը
առ այժմ սահմանադրական խմբեր են կազմել
հայերի թաղերը մարտը պահելու: խմբերը
գնում են տները և հարկ եղած խորհուրդները
տալիս՝ ախտահանութիւն անելու: ձեռնարկել
ենք հանգանակութեան աղբառ ընտանիքնե-
րին թէյ, շաքար և այլ ուտելիքներ տալու:
Որովհետեւ եղանակները սկսել են ցրտել, հա-
յերը որոշել են քաղաքում մնալ, ձեռք առնե-
լով միայն սահմանադրական և զգուշութեան
միջոցներ: Ի նկատի ունենալով, որ շրջակայ
գիւղերը, ուր հարելի է փակել, ոչնչով ա-
պահոված չեն կարող լինել: Դեռ չէ լսվում,
թէ պարսիկների մէջ խօսքայով հիւանդացո-
ւոր կան, բայց միւս կողմից, ինչպէս խօսում
են, Բէգլար-բէգին (ստորկանապետը) կարգա-
դրութիւն է արել, որ հիւանդութեան դէպ-
քերը թաղցնեն և չը յայտնեն:

Մարաղայից մեզ հաղորդում են. «Մա-
րաղայում խօսքայով սաստիկ կտորածներ է
անում: Ինչպէս հաստատեց և հետագայից Թա-
րի իշխանութիւններին ուսը բռնել Ջալալ-
գործով օրական մեծնում են 100 հոգի: սեպ-
տեմբերի 4 և 5-ին օրական մեծնում էին
100—120 հոգի: Խօսքայով առաջին դէպքի ե-
րեսուրը, այն է օգոստոսի 14-ից մինչև սեպտե-
մբեր 6-ը մեծն է 600 թուրք և 10 հայ: Ամբողջ
քաղաքը սգի մէջ է: Խօսքայով Մարաղում տա-
րածվեց հետեւեալ կերպով: Թէհրանում իրանց
ծառայութեան ժամանակը լրացած մարաղեցի
զինուորներ խնդրում են արձակել իրանց՝ տուն
գնալու: Փոխանակ արգելու, Թէհրանի կա-
ռավարութիւնը թոյլ է տալիս: Նրանց մէջ լի-
նում են վարակելածներ: ճանապարհին մի քա-
նիստ մեծնում են և ընկերները նրանց հա-
գուստները փոխանակ այրելու, հետեւը բե-
րում են և յանձնում մեծածնների ընտանիքնե-
րին՝ սուգի համար: Այդպիսով խօսքայով բա-
ցիւններ տարածվում են: Տեղական նահանգա-
պետը մի քանի օր թաղցնում է և ոչինչ չէ
յայտնում Թաւրիզ և նոյն իսկ թաղապետանդի
հեռագրին, որով հարցնում էր՝ ձեռք է՞—Մա-
րաղում խօսքայով կայ: պատասխանում է.
«Ինչպիսի, հիշ չի գիտիս» (Աստուծով ոչինչ
չը կայ): Այդ պատճառով, իր ժամանակին ոչ
մի կարգադրութիւն չհղատ և երբ, վերապէս
ուսը բռնելու եկաւ, խօսքայով արդէն 100 զոհ
էր տանում օրական:

Համաձայնակ սաստիկ տարածման նպաս-
տում է այն հանգամանքը, որ, առաջին, ինքը
Մարաղան, ինչպէս առ հասարակ բոլոր մու-
սուլման քաղաքները, շատ կեղտոտ է երե-
րորդ, քաղաքի մէջ կան բազմաթիւ դարախա-
նաներ (կաշեգործարան) և սպանդանոցներ,
որոնցից ստակալի ժանտահոտութիւն է բու-
րում: Խօսքայով բացի տարածված են սաս-
տիկ տիֆը և փորնարիքը:

Քիւրդերի ապստամբութիւններ
Խօսքայով մեզ գրում են օգոստոսի 31-ից.
«Երկու օր առաջ պարսիկական լուր հասաւ,
որ պարսկա-թիւրքական սահմանապահ զիւ-
ր (Գոթուրում) մօտ 800 հոգուց բաղկացած
բերդապահ մի հրոսակախումբ է հաւաքվել և
զինուորականութիւն ունի բազմաթիւ: Խօսք
զուրկ զիւր կողմապետ և կողմորդն նպա-
տակով, Այդ լուրը սարսափահար է արել քա-
ղաքի ազգաբնակչութիւնը: Տեղիս հայ բժիշկ
եղիպար Սարգսեան, գիմելով տեղացի ազ-
դեցիկ խաներից մէկին՝ Յաթալի խանին,
խնդրեց միջոցներ ձեռք առնել ժողովրդի
պաշտպանութեան համար: «Մենք ոչինչ չենք
կարող անել և չունենք միջոցներ, որ կարո-
ղանանք ժողովուրդը պաշտպանել, երբ քիւր-
դական հրոսակախումբը գայ: Թող ժողովուր-
դը ինքը մտածէ ինքնապաշտպանութեան հա-
մար:» Պէտք է ասել, որ քաղաքում ոչ զօրք
կայ, ոչ հրազէն, որովհետեւ եղած գիւղերնե-
րին տարել են քիւրդ ցեղապետ Ջաֆար-աղի
գլխով ևս: Այս այն Ջաֆար-աղան է, որ
մէջ ամսից ի վեր թաղանում, աւերում է Սա-
մաստի գիւղերը և 400 հոգուց բաղկացած իր
հրոսակախումբով գիմաղբում է պարսկական
6000 հոգուց բաղկացած զօրախմբին:

Լուր է պատում, որ քիւրդերը յարձակվե-
լու են տեղիս գերման—այլական որսառո-
ցի վրայ:»

Սալմաստից, սեպտ. 1-ին գրում են.
«Օգոստոսի 24-ին, կեսօրվայ ժամը 2-ի ժամ
Սարաբերդի, Վարդան և Բոկան գիւղերի
հարթ տարածութիւնը բռնել էր քիւրդ ձիա-
ւոր և հետեւի կողմնորդ: Ականատեսների
պատմելով, քիւրդերի թիւը 300—450 է: Գրե-
րը սկսում են առաջ ժողովել Վարդան գիւղի

հօտը, մի մասն էլ արշաւում է Բոկան գիւղի վրա,
այդ գիւղի հօտն է բռնում: Երբ «հաւաքը» բար-
ձրացաւ, երեք գիւղերի բնակիչները փակվում
են իրանց տներում, քիւրդերի գնդակներից պա-
տակարկելու համար: Սարաբերդի գիւղից
զուրա են գալիս 6 հայ տղայ և դիմադրում
քիւրդերին ու ստիպում նրանց թողնել թալա-
նած ոչխարները ու նահանջել: քիւրդերը ընկ-
նում են 2 հոգի, իսկ հայերից ոչ ոք: Թիւր-
քերը գնում քաղում են Սուլայ, Շորիզ և Օր-
բան գիւղերի ոչխարները:

Քիւրդական այս թաղանները մեծ սարսափ են
ձգել Սալմաստի խաղաղ ժողովրդի վրա:»

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Կուսանկայից հաղորդում են Բիկբաղի
լրագրիչներին, որ բոլոր յղափոխականներն
սպանել են Դուզ-Պօլում 8 բոլոր հարուստ-
ներ, Կոստանում 2 քահանայ և 2 ուսուցիչ,
որոնք կանխածված են եղել լրտեսութեան մէջ:
—Մակեդոնիան «խաղաղակեցիկ» համար
հաւաքված թուրք զօրքերի մի մասը տուն են
վերադարձնում: Այդ պահանջադրերի արար
գնդերը ժողովել էին Մայօնիկ, որ Մարտու-
սիէի շոգենաւորով մեկնէին իրանց ծննդավայ-
րերը: Ողորմած կառավարութեան շնորհով
նրանք այնքան մնացին Մայօնիկում և այն-
պէս քաղցած դրութեան, որ ստիպված եղան
չուկայի խանութներից մի քանիսը կողոպտել:
Զօրքերը վրա են հասնում և կարգը վերա-
կանգնում, հետեւեալով պահեստի գիւղերնե-
րին:

—Մարտիկի նաւահանգստի բանուորները որ
նաւեր են բռնում, ահա մի ամսից աւելի է
գործադուլի մէջ են, Այդ գործադուլի պատ-
ճառով նաւահանգստի ներմուծութիւնը պա-
կասել է 200,000 տօնն, իսկ արտահանու-
թիւնը—150,000 տօն: Մարտուսի կեղծուստ
այդ ժամանակում 3 միլիօն Ֆրանկ պակաս է
եղել, քան անցեալ տարվայ նոյն ամսին:

—Գերմանական զաւորները երէք չեն
հանգստանում: Դեռ երէկ էր, որ պրուսական
խնկերները բռնած տնարդի դերքը և նրանց
անխորտ, գաղաւթական վարձուները ծնեցրին
Հէրցերի պատասխանութիւնը Աֆրիկայում,
մի ապստամբութիւն, որ դեռ չէ վերջացել
մինչև օրս: Այժմ էլ լսվում է, որ արդէն
ապստամբել են աւստրալիական կղզիների
«Բիսմարկեան» կղզիւմ խմբակի վրա գերմա-
նական հպատակ պաշտպաններ: Յուլիսի
վերջերին պաղուսանի յարձակվել են գեր-
ման միսիսիօնների վրա և կողմորդ նրանց
ու 60,000 մարկ էլ կողոպտել միայն մի
կողմը վրա: Միւս մասնում էլ կողոպտած
պակաս չէ եղել: Նկատելու արժանի է, որ ա-
մենից շատ զոհ տալիս են միսիսիօնները,
որոնք իրանց վարձուներով գրգռել են տեղա-
կան խեղճ պաշտպաններին:

ՄՇԱԿԻ ՀՆՈԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՑ

14 սեպտեմբերի
ՏՕԿԻՍ, 13 սեպտեմբերի (Բէյտէր): Վերջին
ստատիստիկական փաստերը ցոյց են տալիս
Նապոլիայի ֆինանսական բաւարար դրու-
թիւնը: Մինչև օգոստոսի 18 ը շրջանառու-
թեան մէջ գտնվող դրամաթղթերի գումարը
21 միլիօնով աւել է այն գումարից, որ շրջա-
նառութեան մէջ էր գտնվում 1903 թւի օ-
գոստոսի 18-ին: զբանցից 19 միլիօն շրջանա-
ռութեան մէջ է գտնվում Մանչուրիայում և
Կորէայում: Հնչուն դրամի շրջանառութիւնը
պակասեց միայն 8 միլիօնով: Պահեստի գու-
մարը մեծացաւ երկու միլիօնով: Բանկերի
ստատիստիկական տեղեկութիւններ է տալիս ա-
ռուսական և արդիւնաբերական գործունէն-
թեան մասին: Պատասխան պաշտպանական
դրամաթղթերի գումարները մեծացան 4 մի-
լիօնով: ասիական բանկերի գումարները
մեծացան 21 միլիօնով: 1904 թւի առաջին 8
ամիսներին արտասահմանեան առուտուրը 20
միլիօն յաւելումով ունեց նորմայից բարձր:
Բընձի և ուրիշ ցանքների բերքը խոտանում
է բարեկալոյ հետեւանքներ: Պատերազմական
ծախսերի գումարներից 70%-ը մնաց երկրում:
ԻՐԿՈՒՏՈՒ, 14 սեպտեմբերի: Ժամանեց Իր-
կուստի գնեցնալ-նահանգապետը:
ՀԱՆԱՅԻ, 14 սեպտեմբերի (Բէյտէր): Ար-
տաքին գործերի մինիստրը յայտնեց պատ-
գամաւորների ժողովին, որ բանակցութիւն-
ներ է վարում Անգլիայի հետ միջնորդ համա-
ձայնութեան վերաբերմամբ եալիան թէյը
Ռուսաստանի ներմուծելու համար:

ՏԱՇԿԵՆՏ, 14 սեպտեմբերի: «Русский Тип-
кестан» լրագրիչը հաղորդում է, որ օրէն-
բուրգ-տաշկենտեան երկաթուղու հիւսիսային
և հարաւային մասերը փակված են ժամանա-
կից առաջ վեց ամսով:
ԻՐԿՈՒՏՈՒ, 14 սեպտեմբերի: Տեղի ունե-

ցաւ Սիբիրը լաւ ճանաչող, «Сибирь» և ու-
րիշ շատ լրագրիչների աշխատակից Միխայիլ
Վասիլեւիչ Զագոսկին հանդիսաւոր թաղումը:
ԲԱՄՆՈՎ, 14 սեպտեմբերի: Տեղի ունեցաւ
տեղական Կարմիր խաչի հիմնած հիւանդանո-
ցի օրհնութիւնը 25 զինուորների համար:
Կ. ՊՕԼԻՍ, սեպտեմբերի 13-ին (Կօրք, Բիւ-
րօ): Զմեւնիայում ժամաւարտով հիւանդանա-
լու հիւնդերող կապակեղի դէպք է եղել: Նը-
բանցից մէջ դէպքը մահացու վարձան է ու-
նեցել:

ՊԱՐԻՉ, 14 սեպտ. (Յատուկ): «Temps»
լրագրի թղթակցի հրատարակած նամակի մէջ,
որը հետևում էր ուսուց զօրքի գործողու-
թիւններին, վկայում է ուսուցական Կարմիր
խաչի գերազանց կազմակերպութիւնը, որը
պարմանալի լաւ է գործում: Պատուիրակները,
բժիշկները և գիւղական բոլորքը արժանի են
մեծամեծ գովեստներին:

ԽԱՐԻՆ, 14 սեպտեմբերի: Վերջին օրերս
պատերազմական բռնի վրա փոփոխութիւններ
չը կան: Թշնամին ոչինչ աւելով գործունէն-
թիւն չէ ցոյց տալիս:—Մասիսիւն ստացված
տեղեկութիւնները համեմատ, Անիւմ հրետան-
դանի ուղղութեամբ սեպտեմբերի լույս 13-ի
գիշերը պարզ լսվում էին թնդանօթաձգու-
թեան որոտումներ: Պարզ երևում էին բռն-
կուսներ իւրաքանչիւր թնդանօթաձգութեան
ժամանակ: Ըստ երևոյթի կարծեօք ծովային
կուր էր ձգվում:

ԲԱՌՈՒՄ, 14 սեպտեմբերի: Կամաւոր նա-
ւատորմի «Սարատով» շոգենաւը սկսեց փո-
խադրել կովկասեան զինուորական շրջանի
պահեստի գիւղերներին:

ՄՈՒԿԻՆ, 13 սեպտեմբերի: Նապոլիայի
ներքն անցան Սոնիսէ գետը 75 վերստ հեռա-
ւորութեամբ Մուկէլից: Աւելի և աւելի
պարզվում է, որ եապօնացիները իրանց գըլ-
խաւոր ոյժերը տանում են դէպի արեւելք:
Նապոլիական բերդապահ զօրքը խաչվում
պատրաստվում է ձեռնային բանակ դնել այն-
տեղ:

ԼՈՆԴՈՆ, 16 սեպտեմբերի: Անգլիական ար-
շաւախումբը Լիսաւայից դուրս եկաւ սեպ-
տեմբերի 10-ին և ժամանեց Նապոլի:—Անգլիա-
կան «Շամուա» կօստր-ականանաւը ջրատոյգ
եղաւ Կաթարօնիայի մօտ: Կօմանդան ազատ-
վեց:

ԲԵՐԶԻՆ, 14 սեպտեմբերի: Թագաւորի ա-
ռողջական դրութեան մասին հաղորդում են,
որ սեպտեմբերի 13-ին թագաւորին մի քանի
անգամ բռնում էր շնչաբեկութիւնը և սաս-
տիկ հաղը: Գտել են սաստիկ հիւանդոտ փո-
փութութիւնների շնչերակների մէջ: Ընդհա-
րապէս անցեալ գիշերը հանգիստ անցաւ:

ԳՕՆՈՒՄ, 14 սեպտեմբերի: (Չօլֆի
գործ): Ժամանեց իտալական մինիստր-նա-
խագահ Զիօլիտտի:

ՊԵՂԻՆ, 14 սեպտեմբերի (Բէյտէր): Տեսնեց
գիւնի տառապ ծանցաօկի հրաման ստացաւ
գնալ Տիբէտ գործերի դրութիւնը տեղի ու
տեղը քննելու համար:

ԲԱՌՈՒՄ, 14 սեպտեմբերի: Դմիտրի եպիս-
կոպոսը օրհնեց իսկական գիմնադրային նոր շի-
նութիւնը, որ կառուցված է քաղաքի հարաւով:
ԵԱՄԱՆ, 14 սեպտեմբերի: Ղիօնի հարաւային
ափի վրա հիւանդներին և վիրաւորներին օգ-
նութիւն հասցնող ժամանակաւոր կօմիտէտը
Բարձրագոյն բարեհաճութեամբ ընդունվեց
Մեծ Իշխանուհի Կաթինա Ալեքսանդրօւնայի
Օգոստափառ հովանաւորութեան տակ: Ելէկտ-
րական լուսաւորութիւն մտցնելու և այլ կա-
րիքների համար խնդրվող 400,000 ռուբլու
փոխառութիւնը թոյլատրված է: Ելէկտրակա-
նութիւնը պատրաստ կը լինի ոչ ուշ, քան
հոկտեմբերի առաջին կէտը:

15 սեպտեմբերի
ՇԱՆԴՆԱՅ, 14 սեպտ. (Բէյտէր): Ռուսաց
զօրքերը հիւսիսային Կորէայում արշաւում են
հարաւային ուղղութեամբ:

ՉԻՅՈՒ, 14 սեպտ. (Բէյտէր): Հասաւ Զօն-
կան, որով եկաւ ուսու տիկինը իր երեխայով
մի քանի չինացիների ուղեկցութեամբ: Զօն-
կան հեռացել է Պօրտ-Արաւոյից կէս գիշերին
սեպտեմբերի 13-ին: Սեպտեմբերի 7-ից այն-
տեղ անդադար կուր է շարունակվում: Բեր-
դապահ զօրքը շատ սպանվածներ և վիրաւոր-
ներ ունի: Եկողները կարծիքով, բերդի գրա-
ւումը տեղի կունենայ մօտ ժամանակում:

ՆԻԻ-ՉՅՈՒՆ, 14 սեպտեմբերի: (Բէյտէր):
Լեռնանից ստացված վերջին տեղեկութիւն-
ների համեմատ, ուսուները հեռացան դէպի
հիւսիս և զբաւած ունեն Մաշուտայից դէ-
պի Շանկիստայից գնացող գիծը Մէնիօնէ-
նի վրայով: Ռուսաց հեծելազօրքը խուզարկու-

թիւններ է կատարում: Արտիլերիան դետեղ-
ված է բարձր դիրքերի վրա Մուկէլի մօտ:
Չիլիբում գտնվում է 600 մարդուց բաղկա-
ցած հետեւի և հեծելազօր 4 թնդանօթիներով:
Հերքելով լուրը Լեռնանի կողմապետ և ըս-
պանվածների թշնամանքի մասին, «Դէլի Մէլ»
լրագրի թղթակիցը Կուրօկի լեռնակում յայ-
տարարում է, որ, իրաւամբ, ոչ ուսու, ոչ էլ
կապօնական զօրքը չէ կարելի մեղադրել վատ
վարմունքի մէջ: Երկու պատերազմող կողմերն
էլ կուրը մղում են այնպիսի մարդաւթութե-
թեամբ, որ անօրինակ է պատերազմական
պատմութեան մէջ: Երկու պատերազմող կող-
մերի գործունէութեան եղանակը վիրաւորներ
և գերիները վերաբերմամբ արտայայտում է
յարգանք դէպի թշնամին: Նրանց վերաբեր-
մունքը դէպի ընկերները բարեհասցակաւ է:

ՇԱՆԴՆԱՅ, 14 սեպտեմբերի: (Բէյտէր):
Շանգուին նահանգի հիւսիս-արեւմտեան ծայ-
րերից հաղորդում են, որ բօկսիօնները այժմ
տարածում են նոյն տեսակ կոչը, ինչպէս
1900 թւականի ապստամբութիւնից առաջ:
Այս կոչը մէջ օտարերկրացիներին ոչնչաց-
նելու ժամանակամիջոցի սկիզբը նշանակված
է հոկտեմբերի 4-ին:

ՉԻՅՈՒ, 14 սեպտեմբերի (Բէյտէր): Երէկ
երկեղեկեան եապօնացիները բռնել են չինական
մի նաւակ, որի մէջ գտնվում էր մի ուսու իւր
կնոջ և երկու երեխաների հետ: Մի այլ նա-
ւակ, որ բերեց այդ լուրը, չը կարողացաւ ի-
մանալ, թէ ինչ եղան այնուհետև ուսուները
հեռաւորութեան պատճառով:

Կ. ՊՕԼԻՍ, 14 սեպտեմբերի: (Բէյտէր): Կա-
մաւոր նաւատորմի «Նիօնի-Նովոբորօ» շոգե-
նաւը երէկ անցկացաւ Բօսֆօրից, ուղղվով
ճանապարհը դէպի Կանդակ և ապա դէպի
Պօրտ-Սայիդ, որտեղ նա պէտք է սպասէ
հրահանգների: Շոգենաւը անցաւ առուտրական
դրօշակով: Նրա վրա չը կայ ոչ զէնք և ոչ
ռազմաթիւք: Շոգենաւը հաղորդակցութիւն
չունեցաւ ափի հետ:

ԼՈՆԴՈՆ, 14 սեպտ. (Բէյտէր): Բէյտէ-
րի գործակալութեան թղթակիցը, որ գտնու-
վում է Մուկէլում, ուսուական զինաւոր բա-
նակում, Պէկինի վրայով հաղորդում է, թէ
հեծելազօրքի առաջաւոր պահակները երկա-
թուղային գծի արմատաւորվող հաղորդում
են, որ եապօնական զօրքի մեծ շարժումները
իրը ապացոյց են նրանց մտադրութեան յար-
ձակումը գործելու: Իրերի դրութիւնը անխո-
փոխ է: Նապոլիական չորս զինվորականը գե-
տեղված են Վանաւորի մօտ: Լուրերին նայե-
լով, ուրիշ երեք զինվորականը գտնվում են
Նանտայի հանգիստի մօտ, թիւքական գնեցնալ
Միշէնկօն հաղորդում է, որ նա կարողացել է
հասնել մինչև հանքերը և հաւաստիանալ, որ
այնտեղ գտնվում են միայն թշնամու փոքրա-
թիւ զօրաբաժիններ:

ԼԱՍՊԱՆԱՅ, 14 սեպտեմբերի: (Բէյտէր):
Գերմանական չորս շոգենաւեր, որոնք պատ-
կանում են ամերիկական—համբուրգեան ըն-
կերութեան, հասան այսօր այստեղ 1000 տօնն
կարգիֆեան անուկ վերջնիւն համար:

ԼԵՍՕԴՈՒՆԵԱՆ, ԹԵՐԱԿԻՉԻ, 13 սեպտեմ-
բերի: (Բէյտէր): Ռուսները խնայում են
ուսուները՝ աչքի առնելով ուսուական վերջնական
յարձակումը: Մի քանի օրերի ընթացքում
կրակի ոյժը թուլացել է: Նապոլիացիները գե-
տեղաւ Մուկէլին նորից առաջարկեցին անձ-
նատուր լինել, առաջարկելով, որ զօրքը հե-
ռանայ բերդից գնեցնալ պատերազմական
բայց ոչ նաւատորմով: Գնեցնալ Մուկէլ
վճարապէս մերժեց որ և է առաջարկութեան
անձնատուր լինելու մասին, սպանալով հրա-
ցանի բռնել իւրաքանչիւրին ու այդպիսի ա-
ռաջարկութեամբ կը գայ: Բերդապահ զօրքը
հերոսական դիմադրութիւն է ցոյց տալիս:
Գիշերները ուսուները հողային պատնէշներ են
չինում: որպէս զի խանգարեն եապօնացիների
առաջխաղացութիւնը արեւելեան կողմից, իսկ
ցերեկները եապօնացիները քանդում են այս
պատնէշները: Գիշերը ուսուները նորից են
կանգնեցնում: Ուրախութեամբ շարունակ-
վում է անընդհատ: Նոյն իսկ լուսնեակ գի-
շերները լուսնի լուսով շարունակվում է որ-
շակոծութիւնը: Ներկայումս եապօնացիները
անընդհատ կերպով ուղղակիւ են պաշտպա-
նութեան զինաւոր գիծը արեւելեան կողմից,
որպէս զի ձեղքումը բաց անեն զորս տալու
համար: Մի քանի տեղերում եապօնական սա-
պեօները պնդեցին հողը մի քանի հարիւր
մէտր տարածութեամբ, բայց մօտեանալ դժ-
ւար է ո

դիրքերի վրա են գնում երգերով: Եսպանացիները պատասխանում են «բանգայ» բացականչությամբ: Եսպանացիները և հայերն ասիական երգեր երգելով:

ՇԱՆՑԱՅ, 14 սեպտ.: (Բեյութեր) Զինական արտաբերի գործերի միջնորդությունը վճարապետ հերբում է այն լուրը, իբր թէ ինքը բողոք յայտնած լինի անգլո-ալբանական դաշնագրի դեմ:

ՊԵՏԵՐՈՎՈՒԹՅՈՒՆ: Գեներալ-ադյուտանտ Կուրոպոտկինի ամենահաջողակորեն հեռագիրը Նոբելի Կայսերական Մեծության անունով 1904 թ. սեպտ. 14-ին. «Երկաթուղուց դեպի արեւելք հապոնական առաջապահ մասերը գրաւում են առաջվայ գրուելու, ձեռնարկելով երբեմն շարժումն առաջ փոքր մասերով, որոնք ապա հեռանում են մեր առաջապահ հեծելազորի ճնշման ներքոյ: Գեներալ Սամուսովի զորախմբում պահակային կայանը խից հապոնացիներից տաւարի մի երամ և վիրաւորվեց հապոնական մի հեծելով: Նորոշման Միլիտերով սեպտ. 13-ի գիշերը ուրախան կողակներ մի խմբով գիշերային յարձակումն գործեց հապոնական գիշերային պահակախմբին վրա Նոբելի մոտ և մեծ շփոթութիւն առաջ բերեց այնտեղ: Սեպտեմբերի 11-ին օրէնքներ գնան կողակների մեր խուզարկու խմբերից մինը որոգայթ լարեց հապոնական մի կէս էսկադրոնի: Անակնկալ կերպով հանդիպելով մեր կողակների կրակին, կէս-էսկադրոնը հրաձգութիւն սկսեց, բայց նշանաւոր կորուստներ կրելով, շուտով շտապով նահանջեց, թողնելով թափված մի քանի սպանված զինուորային: Կողակները բռնել են հապոնական մի քանի ձիեր: Վերադարձի մասին ամենահաջողակորեն զինուորային եւ Ձեր Կայսերական Մեծութեան»:

Նմանապէս ԱՆԷՔՍԱՆԻՐ ՔԱՆԱԹԱՐ
«Հրատարակչներ» ԹԱԳՈՒՎ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵՆԴԻՐ-ԱՆԱՄԱՆԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Բ Ժ Ե Ա Պ Ե Տ

Բժշկ. Բ. Նաւասարդեան
տեղափոխվելով Թիֆլիսից ԲՈՍՏՈՎ
Հիւանդանոցին ընդունում է 11-12 ժ. առ.
և 7-8 ժ. երեկոյան:
Բ. Садовая, 136, Դ. Бакалова.
(ս. 4. 5.) 72-100

Բ Ժ Ի Ե Կ

Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆԸ
տեղափոխվել է Եւանգելիան փողոց, № 12,
Արքեպիսկոպոսական թատրոնից ոչ հեռու:
Ընդունելութիւնը հիւանդանոցին
Առաւօտեան՝ 11-1 ժամ.
Երեկոյան՝ 5-6 ժամ.
(հ. 4.) 3-5

Բ Ժ Ի Ե Կ

Կ. Եղիազարեանց
Ընդունում է Ղլային և ներքին հիւանդութիւններով ամենայն օր առաւօտեան ժամի 12-1, երեկոյան 5-6: Էլեքտրաբուժութեան նորագոյն մեքենաներով: Վերականգնողական թէրապիան մեքենաներով: Վերականգնողական թէրապիան մեքենաներով: Վերականգնողական թէրապիան մեքենաներով:
(3, 5, 9, 12, 14, 16, 19) 5-7

Բ Ժ Ի Ե Կ

Ա. ՂԱՂԱՂԱՆԵԱՆ
Ընդունում է հիւանդներ ներքին և երկաթուղի հիւանդութեամբ. 9-11 ժ. առաւօտեան, 5-7 ժ. երեկոյան: Բուխչիւսի 30, տէլեֆոն 847.
(հ. 4. 2.) 4-5

Բ Ժ Ե Ա Պ Ե Տ

Գր. Տեր-Գրիգորեանց
ընդունում է հիւանդներին—ներքին (մասնատրապէս կրծքի) և երկաթուղի հիւանդութիւններ. ունի բնագիտական կարգիչներ. 154, Միքայիլեան պողոտէի վրա, տէլեֆոն 825.
(2. 4. 5. 7.) 84-105

Ս. ՍՈՂՈՍՈՆԵԱՆԻ

Ընդունում է ընդունում է

ՏԻՆԿԻ ԿԼԻՆԻԿԱՆԵՐԻ

Պատկերներ ձեռնարկ պայմաններով

Նոյն տեղից կարելի է ստանալ հայ գործիչների, աւերակների, տիպերի և նկարների լուսատիպ ԲՅՏ ՆԱՍՏԱՆԵՐ. հաւոր 5 կոպ. 10-ը 40 կ., 100-ը 3 ր. իսկ աւելին գիշերով. աւելի չի ուղարկվում: Դիմել. Փոփոցագրաֆիա Ս. Տոգոմոյան. Թիֆլիս. (ս. 5.) 9-10

ՅՐԱՆՍԵՐԷՆ

Լեզուի մի փորձված ուսուցիչ պատրաստ և պարագլխու ցանկացողների հետ: Ուշը է դարձվում մասնաւորաբար պրակտիկայի վրա: Դիմել «Մշակի» խմբագրութեան:
(4. 4. 5.) 8-10

ԿԱՐ ՈՒ ԶԵԻԻ

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
Ա Ր Հ Ե Ս Տ Ա Ն Ո Ց
„ՓԵՐԱԿ“

Օր. Մ. ՔԱՆԱԹԱՐԵԱՆԻ

Ընդունում են աշակերտներ 12 տարեկանից: Նոյնպէս և գիշերօթիկ: Պայմանների մասին պէտք է իմանալ առաւօտեան ժամի 9-ից մինչև երեկոյան 6-ը: Արխիւնայ փող. № 4 ԴՈՄԵ ՍԼԻՏԵՐԵ. (2. 4. 5. 7.) 7-10

Մ ա մ ու լ է տ ա կ է

Ա. ԶԵՆՈՎԻ

ՊԵՏՐՈՎՈՒԹՅՈՒՆ

Բովանդակութիւն.—Քննել եմ ցանկանում, Գրիգորեան, Քննել, Ընտանիքի հայրը, Թշուաճիկներ, Ապրիլի դաւակ, Արքեպիսկոպոս, Անտանիկ մարդիկ, Սև արեղայ: 3-6 (հ. 4. 2.) Թարգ. Գ. Արքեպիսկոպոս

!! ՊԱՀԱՆՁՅԵՏԻՔ !!

ՇՈՒՏՈՎ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՄԵՐ

ԵՂԲ. Գ. Ե Ա Մ.

ՓՐԻԴՈՆԵԱՆՑՆԵՐԻ

ՊՏԱՆՈՒ ԾԱՌՆԵՐԻ

ԲՈՒԾԱՐԱՆԻ

Պատկերազարդ կատարող հայրեն լեզուով բովանդակութիւն է Անգլոֆոնիայի երկաթուղու Սկրա կայարանի մաս: Կատարողը ուղարկում է ՁԻՐԱՐԱՆԻ:

Դիմել. Թիֆլիս, Մ. Ե. Քրիժոնով Սերգիւսկայ փող. (հ. 4.) 10-12

ՅՈՒՆԿԻ ՄԵԼԻՐ-ԶԻՆԿԱՆԻ

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ-ՊԱՆՈՒՆՈՒՄ

Ընդունում են գիշերօթիկ և երթնիկ աշակերտներ և պատրաստվելու բոլոր միջնակարգ դպրոցների համար. ընդունվում են նաև իբրև գիշերօթիկ դպրոցներում արդէն սովորողները: Օտար լեզուներից աւանդվում են գիշերօթիկ և ֆրանսերէն: Թիֆլիս, Բէհրու-թեան փողոց № 10, տ. պոլի. Ստեփանեանի:
(հ. 4. 4.) 7-10

ԱՆԵՐՏԵԼՈՎ

Թիֆլիսի քաղաքային արհեստագործ դպրոցը, և ունենալով լաւ փորձառութիւն, պատրաստ եմ պատուէրներ ընդունել ամեն տեսակ փշաքան լէքտրական զանգանների վերանորոգման և ինքն անհատական նոր պրակտիկ անհատ համար, ամենաձեռնառու պայմաններով:
Հասցէ՝ Թիֆլիս, Գորեայ № 7. Մ. ԱՅԵԱՆ. Կամ թէ էլ, Գաղաքային Էմանուէլի գրադարան:
Հ. 2. 3-3

Լոյս տեսաւ

Բժ. Գ. ՍԱՐԳՍԵԱՆՑԻ

ՕԳՏԱԿԱՐ ԵՒ ՎԵՍՏԱԿԱՐ ՄԻԿՐՈՐԵՆԵՐ,

ՕԴԻ ՓՈՇԻՆ

գրքով (նկարներով)

Գրին է 15 կոպ.

Վաճառվում է «Գուտտենբերգ» գրախանութում և հեղինակի մօտ (Բաղու, Բոլշայա Մօրսկայա, տ. Մեփրեմովի): 2. 2. 2-5

ԶԱՐԱՐԻՍ ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ

Կովկասեան գրավի ճառագողով վաճառվում են

կարգաբեկից թարգմ. հեռուալ գրքերի:

1. Նիւտոնի լիւթ. «Հրաժան» (պատմութեամբ). 5 կ.

2. Սուրբիլիսի թ. «Գիշերանաւանդ» (էսկիզ). 3 կ.

3. Գուտտեն-Մեփրեմի «Անակղ զոն» (պատկեր ժողովրդի կենսերի). 8 կ.

4. Դարեկի Ա. «Ֆաթի» (Հատկական պատմութեամբ). 5 կ.

Գուտտենի գնդերին 25% զեղծ, ճանապարհաբար գնդերի վրա:

Շուտով լոյս կը տեսնի Ա. Ահարոնեանի «Լեոնեան» — պատկեր վրացերէն լեզուով գրին է 5 կոպէկ. (հ. 4.) 2-2

Գ. Ե. ԱՆՍԱՐԳԻՍՈՎԻ ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆԸ ծախվում է պոլիտեխնիկական արտասահմանեան, առական և կովկասեան տեսակների:

Հասցէ.—Տանձի Տկր, Յաւ. յ. ճր. Աւսարկոսով:

Մանրամասն ցուցակը և համառոտ գները հուլիսի 1-ին և վրացերէն լեզուներով ուղարկվում են ձեր:

(հ.) 3-10

Թիֆլիսի Գաղաքային Վարչապետ յայտարարում է, որ այս տարվայ սեպտեմբերի 1-ից երկու տեղ ազատվել են Ե. Ս. Արխեպիսկոպոսի անունան թողակներէ. մէկը Թիֆլիսի I Իրական գիմնազիայում և միւսը III Իրական գիմնազիայում: ՀԱՅՈՒՆՆԵՐԻ համար, տարեկան 100-ական ռուբլի:

Համաձայն Ե. Ս. Արխեպիսկոպոսի անունան թողակների կանոնների, այդ երկուսն էլ կը տրվին Թիֆլիսի Ընտանիքներից ամենաաղքատ աշակերտներին:

Գաղաքային Վարչութեան II մասին տրվել է խորհրդի հետ միասին պէտք է ներկայացվին ծննդական վկայագրերի պատճենները և յիշված գիմնազիաների վարչութեան վաւերացումը, նոյնպէս և սանիտի ծնողների հասցէն: Առանց այդ գոյությունների խորհրդից չեն ընկնելու: Մագիստրը ընդունվում են մինչև սեպտեմբերի 28-ը: Կ. 2. 4. 1-3

Բ Ա Ց Վ Ա Ծ Ե Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

(ԵՐԿՐՈՐԻ ՇՐՋԱՆ (1904-1905))

ԱՌՈՂՋԱՊԱՀԻԿ ԹԵՐԻԹ

ՆԿԱՐԱԶԱՐԻ ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԵՍԻ

ԲԱՅԱՆՈՐԴԱԿԱՆ ԵՒ ԱՄԵՆ ՏԵՂ

Տարին—2 ր. 50 կոպ. (Արտասահման 8 ֆրանկ).

Կէս տարին—1 ր. 75 կոպ. Երեք ամիսը—1 ր.

Առանձին համարները ծախվում են 10 կոպ.

Ապառիկ բաժանորդագրութիւն չէ ընդունվում:

Բաժանորդագրական տարին հոկտեմբերից հոկտեմբեր է:

Առաջիկայ 1904-1905 թ. շրջանում «Առողջապահիկ Թերթը» կը հրատարակվի նոյն զերբով և ծրագրով և նոյն աշխատակիցների մասնակցութեամբ:

«Առողջապահիկ Թերթը» տարեկան բաժանորդները կը ստանան.

1. Քան և չորս համար «Առողջապահիկ Թերթ», 1/2 տպագրական թերթից (24 երես)

2. Վեց գրքով թէ խմբագրի և թէ ուրիշ հեղինակների աշխատատեղած, Բժշկի Զրոյցներ ընդհանուր խորագրով, ամեն մէկը նոյնպէս 1-1/2 տպագրական թերթ (32-48 երես):

Գրքերից, որոնք թոյլ կը տայ նրանց բովանդակութիւնը, զարգարված կը լինեն նկարներով:

3. Բժշկի Թերթիկները զանազան բովանդակութեամբ: Այս Թերթիկները տպվում են այնպէս, որ նրանց կարելի է ծախել և կապել փոքրիկ տետրակներ: «Առողջապահիկ» արդէն հրատարակել է երկու այդպիսի Թերթիկ—«Մի Թերթ» և «Նուէր ծննդականներին»: Առաջիկայ շրջանում հրատարակվելու է Թերթիկների քանակութիւնը կախված կը լինի ընթացիկ պահանջներից և բաժանորդագրութեան աղոյթներից:

4. Կովկասեան Կայսերական Բժշկական Ընկերութեան այն բոլոր ժողովրդական հրատարակութիւնները, որոնք լոյս կը տեսնեն 1904-1905 թ. շրջանում:

Բաժանորդ գրվել կարելի է Թիֆլիսում, «Առողջապահիկ Թերթի» խմբագրատանը, Գաւառիկայ փողոց, № 26 կամ «Գուտտենբերգ» գրաւաճառանոցում (Շտաբայա և Իվորցովայա փողոցների անկիւնում):

Բաւում գրվել, 1. տիկին Մարիա Սուրուկեանի գրաւաճառանոցը (Կնիշ. մաշին. «Сотрудник»):

Բալխանում գրվել պ. Աստուածատուր Մատուրեանին. «Անդրանիկ» ընկերութեան գրաւաճառանոցում:

Օտար քաղաքներից գրվում են. Թիֆլիս, редакция «Арогджапайк Терт» կամ Թիֆլիս, Книжный магазин «Гуттенберг»:

Արտասահմանից. Tiflis, Rédaction de la Revue «Arogdjapaik Tert»:

Նմանապէս հրատարակել Դ-ր Վ. Արքեպիսկոպոս:

Բ Ա Լ Կ Ի Ը Ն Կ Ե Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

Վագրանի փողոց, առան Թիֆլիսի առևտրական բանկի:

Ա Ր Ա Ջ Ա Ր Կ Ո Ւ Մ Է

1) Երկաթե թղթիներ ամեն տեսակի և չափերի:

2) Տանիքի թղթեր (кровельное желто) Միլիտայի և այլ գործարաններից:

3) Ցեմենտ Նովորոսիսկի գործարաններից:

Մեծ քանակութեամբ գնողներին որոշ զեղծով է արվում: Ընդունվում են պատուէրներ

Անդրիկական երկաթուղու բոլոր գծերի վրա յանձնելու պայմանով:

Նովորոսիսկի Գիմնեզիի ցեմենտ առաւարկվում է վաղուց գնողներին Զորս բուրլի վարսուկ խոյի Թիֆլիսի կայարանում, իսկ ընկերութեան պահանջի Զորս բուրլի խոյանաւում կոպէկ:

(հ. 4. 2.) 10-10

Ֆինանսների նախարարութեան իրաւասութեան տակ գտնվող

ՀԱՂՈՒՆՊԱՀՈՒԹԵԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՐԲԱՀԱՄԵԱՆԻ

Հեղինակ «Առևտրական, գործարանական և նաւթարդիւնաբերութեան հաշուապահութեան ձեռնարկ», որ ֆինանսների նախարարութեան ուսումնական բաժնի կողմից ընդունված է իբրև օժանդակ ձեռնարկ առևտրական դպրոցներում և նրանց գրադարաններում

ՍՈՎՈՐԵՅՆՈՒՄ ԵՒ ՊԵՏՐՈՎՈՒԹՅՈՒՆ

Երկու սեռի անձանց՝ գործնական ձևով հաշուապահութիւն 4 1/2 ամսում:

Պարապլունքի առաւարկներն են.

1) Բաւական կրկնակի հաշուապահութիւն արդիւնագործութեան բոլոր ճիւղերի վերաբերյալ, վաճառականական, բանկային, յանձնարարական, գործարանական, նաև նաւթարդիւնաբերական և նաւթարդիւնական հաշուապահութիւն: 2) Առևտրական թուաքանութիւն: 3) Առևտրական թղթակցութիւն: 4) Մուրհակային և առևտրական օրէնքներ: 5) Վալիւրագրութիւն և ուղղումն ամենալաւ ձեւագրի: 6) Թուաքանութիւն համարչի վրա: 7) Գրկու վարժութիւն «Բժշկականութիւն» գրկու մեքենայի վրա (կամաւոր):

Կուրսերի համար դասաւորներ են հրաւիրված համալսարանական կրթութիւնով և իրանց գործի մասնագէտ մարդիկ, որոնք հաստատվել են իրանց պաշտօնով ֆինանսների նախարարութեան ուսումնական բաժնի կողմից. գեղագրութեան համար ևս հրաւիրված է մի գեղագիր նկարիչ:

Ընդունելութիւն ամեն օր ժամը 5-ից մինչև 7-ը երեկոյան: Պարապլունքները սկսվում են 1904 թ-ի սեպտեմբերի 15-ից պարբերաբար ամեն 4 ամիս ամենայն ճշդից յետոյ՝ 60 ռուբլի վճարով ամբողջ դասընթացի համար:

Դասընթացը աւարտողներին տրվում են, ֆինանսների նախարարութեան թոյլատրված ծրագրի համաձայն, ատեստատներ:

Դասընթաց անկախ, 1904 թ-ի սեպտեմբերի 1-ից կը բացվեն քիչ պատրաստութիւն ունեցող անձներ համար առանձին լրացուցիչ և կրկնողութեան կուրսեր ուսաց լեզուի և թուաքանութեան համար:

Ցանկացողներին խորհում են դիմել գրաւոր կերպով կամ անձամբ կուրսերի հիմնադրին՝ Թիֆլիսում, Մ. Վ. Աբրաամյու, Николаевская ул. № 46, ամենայն օր: Ծրագրերն ուղարկվում է ձեր:

Վերան յիշված ձեռնարկը ծախվում է Ռուսաստանի բոլոր գրաւաճառանոցներում: Օտարաքաղաքացիները գրկու գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պատի ծախս վճարելու: Գրկու է 3 ր. 50 կոպէկ:

(հ. 4. 4.) 23-25